ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 890-Ա

«09» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԻՍԱՀԱԿՅԱՆ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ 33 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ½-ՐԴ ՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐՇԱՄ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ½-ՐԴ ՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի հունիսի 11-ի վճիռը /Գործ թիվ ՇԴ/0226/02/26/՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Իսահակյան, 1-ին փողոց 33 հասցեում գտնվող բնակելի տան և բնակելի օժանդակ շինությունների ½-րդ մասի նկատմամբ Անի համայնքի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 24-ի **N** 123-Ա որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Վարշամ Անդրանիկի Խաչատրյանի դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Իսահակյան, 1-ին փողոց 33 բնակելի տուն հասցեյում գտնվող բնակելի տան և բնակելի օժանդակ շինությունների ½-րդ մասը /կադաստրային ծածկագիր՝ 08-043-0007-0011, Վկայական՝ N 06082026-08-0001/ նվիրել տվյալ բնակարանում փաստացի բնակվող քաղաքացի Վարշամ Անդրանիկի Խաչատրյանի /Անձնագիր՝ AR0236530, տրված՝ 03.03.2017թ. 008-ի կողմից

/հետագայում՝ Նվիրառու/:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Իսահակյան, 1-ին փողոց 33 բնակելի տուն հասցեյում գտնվող բնակելի տան և բնակելի օժանդակ շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-043-0007-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,111 հեկտար հողամասի ½-րդ մասը՝ մակերեսով 0,0555 հեկտար, /Վկայական՝ N 06082026-08-0001/ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, տվյալ հողի կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ **78881 (յոթանասունութ հազար ութ հարյուր ութսունմեկ)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Վարշամ Անդրանիկի Խաչատրյանին /Անձնագիր՝ AR0236530, տրված՝ 03.03.2017թ, 008-ի կողմից, հետագայում Քաղաքացի/:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված անշարժ գույքի համար Քաղաքացու հետ կնքել նվիրատվության և որոշման 2-րդ կետով վաճառված հողամասի համար առուվաճառքի պայմանագրեր:

4. Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Քաղաքացու միջոցներով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Քաղաքացուն պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«09» հոկտեմբերի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 891-Ա

«12» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՓՈՂՈՑ 31 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՆՉԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ը ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 2-րդ, 3-րդ հոդվածների դրույթներով,հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի ժապավենամատյանների N 287 մատյանից՝ 2026 թվականի օգոստոսի 25-ին տրված քաղվածքը, հաշվի առնելով որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Խաչատուր Աբովյանի փողոց, թիվ 31 բնակելի տուն հասցեում գտնվող՝ 08-003-0044-0031 կադաստրային ծածկագրով հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում.

որոշում եմ՝

1. Վերականգնել գույքային իրավունքները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքի, Մարալիկ քաղաքի Խաչատուր Աբովյանի փողոց, թիվ 31 բնակելի տուն հասցեում գտնվող՝ 08-003-0044-0031 կադաստրային ծածկագրով **0,13225** հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և նրանում առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շինությունների նկատմամբ ճանաչել՝ Հենրիկ Ժորժիկի Մելքոնյանի/ ծնված՝ 12-ը սեպտեմբերի 1955 թվական, անձնագիր՝ AT0371060, տրված 31-ը հունվարի 2020թվականին՝ 022-ի կողմից/,Աիդա Բենետիկոսի Մելքոնյանի/ծնված՝ 03-ը օգոստոսի 1960 թվականին, անձնագիր՝ AT0426404, տրված՝ 29-ը ապրիլի 2020թվական, 006-ի կողմից/

Արտյոմ Հենրիկի Մելքոնյանի /ծնված՝ 02-ը օգոստոսի 1982թվական, նույնականացման քարտ՝ 017164427, տրված՝ 25-ը մարտի 2025թվականին՝ 052-ի կողմից/, Ստելլա Հենրիկի Մելքոնյանի/ծնված՝ 10-ը հուլիսի 1985թվական, անձնագիր՝ AR0418558, տրված՝ 10-ը օգոստոսի 2017թվականին՝ 007-ի կողմից/, Միեր Հենրիկի Մելքոնյանի/ծնված՝ 05-ը սեպտեմբերի 1994 թվական, նույնականացման քարտ՝ 020286886, տրված 03-ը փետրվարի 2026թվականին՝ 064-ի կողմից/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«12» հոկտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 892-Ա

<<12>> հոկտեմբերի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 518-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 17-ի N 518-Ա որոշման մեջ սեփականատերը «Անի համայնք» նշվել է սխալ. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 17-ի N 518-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման մեջ «Անի համայնք» սեփականատերը փոխարինել՝ «Սերգո Գուրգենի Մարգարյան»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<12>> հոկտեմբերի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 893-Ա

12 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՖԵԴՈՐ ՊԱՎԵԼԻ ԱԼԵԿՍԱՇԿԻՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0008-0007/ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» 28-րդ կետի, 29-րդ կետի 3-րդ ենթակետի, 50-րդ և 52-րդ կետերի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-003-0008-0007/ Ֆեդոր Պավելի Ալեկսաշկինին սեփականության իրավունքով պատկանող՝ 0,1039 հեկտար հողամասին և նրանում առկա բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Մարալիկ քաղաք, Նոր թաղամասի 11-րդ փողոց, թիվ 23 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«12» հոկտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 894-Ա

<<12>> հոկտեմբերի 2026 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 140-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներովև հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 17-ի N 140-Ա որոշման մեջ 20235L7YVJB նշվել է սխալ.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրում գտնվող Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող / N 140-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման հիմնական մասում նշված՝ «20235L7YVJB» բառակապակցությունը փոխարինել «2023L7YVJB» բառակապակցությունով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<12>> հոկտեմբերի 2026 թվական
քաղաք Մարալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 895-Ա

12 հոկտեմբերի 2026 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 29-րդ կետերի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» ապրիլի 22-ի N 633-Ն որոշման 6-րդ կետի ժ) ենթակետի՝

որոշում եմ՝

1.Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտապանության համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական մատակարարման համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանման համայնքային ծառայության պլանը՝ համաձայն № 8 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«12» հունվարի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 896-Ա

«12» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 15-ՐԴ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 22-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Ալվարդ Ջանիբեկի Թադևոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասի ճշտված սահմաններով գլխավոր հատակագիծը հաստատելու խնդրանով: Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, Անի համայնքի Ջրափի բնակավայրի 2-րդ փողոց, 15-րդ հասցեում գտնվող՝ 08-098-0017-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի տեղազննման՝ փաստացի չափագրման և փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.112734 հա: Կան հողամասի տեղադիրքի և սահմանների անհամապատասխանություններ գործող էլեկտրոնային քարտեզի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի /N 22102024-08-0021/ միջև:

Որոշում եմ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք Ջրափի բնակավայրի 2-րդ փողոց, 15-րդ հասցեում գտնվող Ալվարդ Ջանիբեկի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող 08-003-0017-0021 կադաստրային ծածկագրով հողամասի իրադրության հատակագիծը՝ համաձայն համապատասխան որակավորման վկայական ունեցող անձի կողմից կից ներկայացված և սահմանված կարգով հաստատված հողամասի ուղղման հատակագիծ:
2. Որոշումից ծագող իրավունքը ենթակա է իրավունքի պետական գրանցման:
3. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«12» հոկտեմբերի 2026 թվական
ք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 897-Ա

<<12>> հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ, Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 252 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՐԱՀ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՂԱՍԻ ՍԻՄԱՎՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ <<09>> ԱՊՐԻԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 07 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՎԱՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի <<ժ>> ենթակետի, 28-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի» 125-րդ կետի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154^1-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատանքային խմբի կողմից քաղաքացի՝ Աղասի Սիմավոնի Հարությունյանի կողմից /հետագայում՝ կառուցապատող/ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի, Հ. Շահինյան փողոց, թիվ 252 հասցեում առևտրի և սպասարկման սրահի կառուցման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից տրամադրված «09» ապրիլի 2024 թվականի N 07 շինարարության թույլտվության սահմանված ժամկետում շինարարությունը չավարտելու փաստի հիմքով քաղաքացի՝ Աղասի Սիմավոնի Հարությունյանի կողմից Վարչական իրավախախտում թույլ տալու վերաբերյալ կազմված 2026 թվականի

հոկտեմբերի 08-ի արձանագրությունը և կառուցապատողի 2026 թվականի ապրիլի 07-ի դիմումը՝ կառուցապատվող օբյեկտի նախահաշվային արժեքի վերաբերյալ.

որոշում եմ՝

1. Կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում շինարարությունը չավարտելու համար քաղաքացի Աղասի Սիմավոնի Հարությունյանի նկատմամբ նշանակել 45000 (քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101124 հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կառուցապատողին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<12>> հոկտեմբերի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 898-Ա

<<12>> հոկտեմբերի 2026 թվականի քաղաք Մարալիկ

N 07 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, և հիմք ընդունելով քաղքացի՝ Աղասի Սիմավոնի Հարությունյանի 2026 թվականի ապրիլի 7-ի դիմումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ.Շահինյան փողոց 252 հասցեում առևտրի և սպասարկման սրահի կառուցման համար Անի համայնքի ղեկավարի կողմից 09 ապրիլի 2024 թվականին տրվել է N 07 շինարարության թույլտվությունը: Կառուցապատողը դիմել է Անի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգելու՝ շինարարությունը ավարտին հասցնելու և ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտական շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Որոշում եմ՝

1. 2024 թվականի ապրիլի 09-ին տրված՝ N 07 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 6 ամիս ժամկետով մինչև 12 ապրիլի 2027 թվական:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<12>> հոկտեմբերի 2026 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, քաղաքային հրապարակ 1
Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, Էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12» «10» 2026թ.N 899 Ա

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրում 3-րդ փողոց հասցեում Անի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, կառուցվել է ինքնակամ շինություն՝ ավտոտնակ, որով ծանրաբեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող 08-044-0581-0001 կադաստրային ծածկագրով հողամասը:

Հովհաննես Գասպարյանին պատկանող Անի համայնք Լանջիկ բնակավայր 3-րդ փողոց, 23 բնակելի տուն հասցեին հարակից տարածքում կառուցվել է ինքնակամ շինություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ Անի համայնքի ղեկավարի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

Անի համայնքի աշխատակազմի աշխատակիցների կողմից օրենսգրքի 9–րդ, 251–րդ, 254–րդ և 255–րդ հոդվածներով սահմանված կարգով կազմվել է Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2026 թվականի սեպտեմբերի 18–ին բացահայտվել և արձանագրվել է, որ Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի կողմից 154-րդ հոդվածի 3-րդ մասով կատարվել է իրավախախտում: Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի խախտելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող

ընդհանուր օգտագործման 08-044-0581-0001 կադաստրային ծածկագրով մասում, առանց հողամասի նկատմամբ համապատասխան իրավունքի, ինքնակամ կառուցել է շինություն:

Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է փոստային անդորրագրով: Կազմված արձանագրության հիման վրա 01.10.2026թ. Հովհաննես ԱՆդրանիկի Գասպարյանին Անի համայնք, գ. Լանջիկ, 3-րդ փողոց, տուն 21 հասցեով փոստային ծառայության միջոցով ծանուցագիր է ուղարկվել վարչական վարույթի լսումների տեղի և ժամի վերաբերյալ:

Անիի համայնքապետարանում 08.10.2026թ. ժամը 14:30-ին անցկացվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցել է Հովհաննես Անդրանիկի Գասպարյանը: Վարչական վարույթի լսումների ընթացքում Հովհաննես Անդրանիկի Գասպարյանը փաստեց, որ կառուցել է ինքնակամ շինություն, որի մի հատվածը կառուցվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող հողի վրա, իսկ մյուս հատվածը կառուցվել է համայնքի ընդհանուր օգտագործման ճանապարհի վրա:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում ձեռք բերված ապացույցներով վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

- Անի համայնքի Լանջիկ բնակավայր 3-րդ փողոց հասցեում, Անի համայնքին պատկանող հողամասում, առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, ինքնակամ կառուցվել է շինություն, իսկ դրանով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվում է ապօրինի:
- Վերոնշյալ ինքնակամ շինությամբ փաստացի ծանրաբեռնված է Անի համայնքի սեփականություն հանդիսացող 08-044-0581-0001 կադաստրային ծածկագրով ընդհանուր օգտագործման հողամասը:
- Անի համայնքի Լանջիկ բնակավայր 3-րդ փողոց, 23 բնակելի տուն հասցեին հարակից հողամասում, Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի կողմից առանց համապատասխան թույլտվությունների կառուցվել է ինքնակամ շինություն, որի մի հատվածը գտնվում է Հովհաննես Անդրանիկի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 08-044-0009-0059 կադաստրային ծածկագրով հողամասում, իսկ մյուս հատվածը գտնվում է Անի համայնքի սեփականություն հանդիսացող 08-044-0581-0001 կադաստրային ծածկագրով ընդհանուր օգտագործման հողամասում:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող կառավարության որոշմամբ /այսուհետ սույն հոդվածում նաև 'Կառավարության որոշում/ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների /կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների/ վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները: Կառավարության կողմից կարող են սահմանվել սույն մասով նախատեսված ինքնակամ կառույցների /կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների/ օրինականացման առանձնահատկություններ:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման /ապամոնտաժման/ և հողամասի նախկին վիճակի վերականգման ծախսերը:

ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

բ) որոնք կառուցված են Հայստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմնված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

- Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

1. Հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին.
2. Մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վաչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամբողջությամբ հաստատված եմ համարում այն փաստը, որ Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի կողմից թույլ է տրվել վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի երրորդ մասով և առկա չէ Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող որևէ հանգամանք:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և ղեկավարվելով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ, 48-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 1-ին կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, 305-րդ և <<Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հովհաննես Անդրանիկի Գասպարյանին ենթարկել վարչական պատասխանատվության, նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով՝ 2.000.000 /երկու միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել Հովհաննես Անդրանիկի Գասպարյանին :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Անդրանիկի Գասպարյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:
5. Սույն որոշմամբ նշանակված տուգանքը Հովհաննես Անդրանիկի Գասպարյանի կողմից պետք է վճարվի սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում Անի համայնքապետարանի թիվ 900495101124 հաշվեհամարին, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում:
6. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի համաձայն:

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 900-Ա

«14» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

«ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 140-Ն որոշումը և հաշվի առնելով «Բիթիէլ Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արամ Գասպարյանի ներկայացրած հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն «Բիթիէլ Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, 7/1-9)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Հրանտ Շահինյան փողոցում, ԱԲ կողմում, 36 քառակուսի մետր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու նպատակով՝ «Վայլդբերիս» գովազդային պաստառ տեղադրելու համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հայտատուին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«14» հոկտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 901-Ա

«14» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱԳԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ»-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշման հավելված 1-ով և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Գագիկ Սերյոժայի Նալբանդյանի հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն «Գագիկ Սերյոժայի Նալբանդյան» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 57440604, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Անի համայնք, Քարաբերդ բնակավայր, 1-ին փողոց)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի 1-ին փողոցում գտնվող՝ 47 քառակուսի մետր մակերեսով հիմնական շինություն հանդիսացող առևտրի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու նպատակով:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Գագիկ Սերյոժայի Նալբանդյանին սույն որոշման ընդունման մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«14» հոկտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 902-Ա

«14» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԻՄՈՆ ՄԿՐՏԻՉԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 61401156) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 140-Ն որոշման հավելված 1-ով, և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Սիմոն Մինասյանի հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Սիմոն Մկրտիչի Մինասյանին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի 6-րդ փողոցի 4-րդ տուն հասցեում գտնվող առևտրի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին անհատ ձեռնարկատեր Սիմոն Մկրտիչի Մինասյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«14» հոկտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ., հեռ.0242-2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 903-Ա

«14» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԻ ԼՈՌԵՑՅԱՆԻՆ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 20042307) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՁԵՐԺԻՆՍԿԻ ՓՈՂՈՑԻ 20-ՐԴ ՇԵՆՔՈՒՄ 1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթներով, և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Հակոբ Կարապետի Լոռեցյանի հայտը.

որոշում եմ՝

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Հակոբ Կարապետի Լոռեցյանին (հարկ վճարողի հաշվառման համար՝ 20042307)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի 20-րդ շենքում գտնվող հանրային սննդի կետում 1 քառակուսի մետր մակերեսով արտաքին գովազդային պաստառ տեղադրելու համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հակոբ Կարապետի Լոռեցյանին որոշման ընդունման մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«14» հոկտեմբերի 2026 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
քաղաք Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

ՏԵՂԵԿԱՆՔ

Տիվում է առ այն, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի հերթական 2026 թվականի հոկտեմբերի 14-ի N 904-Ա որոշումը համարվում է գաղտնի որոշում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«14» հոկտեմբերի 2026 թվականի
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք,
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 905-Ա

«14» հոկտեմբերի 2026 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-ԻՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃԻՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/0031/02/10/՝ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱ ՌԱԶՄԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ, ՌԻԳԱՅԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 9/1 ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0026-0051 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02126 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱ ՌԱԶՄԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի, դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի մարտի 10-ին օրինական ուժի մեջ մտած վճիռը /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0031/02/10/՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ռիգայի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 9/1 անասնաշենք հասցեում գտնվող 180 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը ճանաչվել է քաղաքացի Արա Ռազմիկի Հովհաննիսյանի /հետագայում քաղաքացի/ սեփականությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 24-ի N 121-Ա որոշումը և հաշվի առնելով քաղաքացու 2026 թվականի հունիսի 3-ի դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի մարտի 10-ին օրինական ուժի մեջ մտած վճռով /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0031/02/10/՝ քաղաքացի Արա Ռազմիկի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ճանաչված մարզ Շիրակ Անի համայնքի, քաղաք,Մարալիկ, Ռիգայի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 9/1 անասնաշենք հասցեում գտնվող անասնաշենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0026-0051 կադաստրային

ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,02126 հեկտար մակերեսով հողամասը /հետագայում՝ Անշարժ գույք/, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, մեկ քառակուսի մետրը՝ 792 Հայաստանի Հանրապետության դրամ, 0,02126 հեկտար մակերեսով հողամասի համար ընդամենը՝ **168 380 (մեկ հարյուր վաթսունութ հազար երեք հարյուր ութսուն)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, վճարել 900495101132 հաշվեհամարին և վաճառել քաղաքացի Արա Ռազմիկի Հովհաննիսյանին (անձնագիր AL0208715, տրված՝ 12.04.2023 թվականին, 022-ի կողմից, հաշվառման հասցեն՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց տուն 9) և կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Քաղաքացու միջոցներով:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Արա Ռազմիկի Հովհաննիսյանի հետ /այսուհետև՝ Քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«14» հոկտեմբերի 2026 թվական
քաղաք Մարալիկ